Հավ 2 ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից իրականացվող «Տարվա լավագույնները» 2022 մրցույթի ներկայացվող ծրագրի սեղմագիր

Ծրագրի անվանումը	Կենդանի պատմություն
Անվանակարգը	Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչական լավագույն ծրագիր
Ծրագրի ընդհանուր նկարագիր	**Նախագծի** թեման <<Կենդանի պատմություն>> ենք անվանել,քանի որ այն վիրված է 44 –օրյա պատերազմին զոհված,բայց մեր սրտերում հավերժ կենդանի մնացած Գյումրու թիվ 15 հիմնական դպրոցի / ՀՀ Շիրակի մարզ/ **վեց հերոսներին**, ովքեր անմահացան,որ անմահացնեն: Նախագծի շուրջ աշխատել ենք հիմնական խմբով ու ենթախմբով: 3. **Հիմնական խմբում 8 –րդ** / այժմ 9-րդ/ **և 6-րդ** /այժմ 7-րդ / դասարանի աշակերտներ են,իսկ ենթախումբը 6-րդ / 7-րդ / դասարանի,**որոնք կապահովեն նախագծի շարունակականությունը՝ ուսումնասիրելով դպրոցի կենդանի լեգենդների սխրագործությունները :** **Թեման ուսումնասիրելու և հետազոտության հարցերին պատասխանելու համար** աղբյուր են ծառայել՝ տեղական թերթերը,ընտանեկան լուսանկարները,բանավոր պատմությունները,զինվորների անձնական իրերը,հեռախոսազանգերը: Յուրաքանչյուր զոհված հերոսի համար ստեղծել ենք թղթապանակ ՝ իրականացնելով փաստաթղթավորում,ուր տեղավորել ենք ամենամանրուք համարվող տեղեկություններն ու իրերը: Ժամանակի ընթացքում դրանք կդառնան հավաստի աղբյուրներ այդ շրջանի պատմությունը ուսումնասիրողների համար,քանի որ դասագրքերում ինչպես միշտ,նշված պատերազմները կարծում ենք լավ չեն լուսաբանվելու կամ լուսբանվում են մասնակի՝ ընդամենը մի քանի մասնակիցների անուններ ու որոշակի ռազմական գործողություններ:

Ծրագրի նպատակ և խնդիրներ	**Նախագծի նպատակի սահմանում** «Կենդանի պատմության» միջոցով համայնքին և դպրոցի սովորողներին ծանոթացնել ՀՀ Շիրակի մարզի<<Գյումրու թիվ 15 հիմն. դպրոց>>ՊՈԱԿ-ի աշակերտների մասնակցությանը 44-օրյա պատերազմին, նրանց սխրագործությանը, կյանքին և գործունեությանը **Խնդիրները՝** Նպաստել սովորողների • նախագծային գործունեության հմտությունների զարգացմանը • սոցիալական համագործակցության հմտությունների ձեռքբերմանը • անձնական և մասնագիտական ինքնաիրացման հնարավարությունների ստեղծմանը • ժողովրդավարության, հանդուրժողականության և հայրենասիրության արժեքների ձևավորմանը . նախագծային արդյունավետ փորձի բացահայտմանը և տարածմանը

Ակնկալվող արդյունքներ	Հետազոտական խնդիրն ուսումնասիրելու արդյունքում սովորողները **կիմանան՝** համայնքի ու դպրոցի պատմությունը,Արցախյան ու 44-օրյա պատերազմի պամությունը,նշված պատերազմների մասնակիցներին,նրանց սխրանքը, գյումրվա որոշ ավանդույթներ ու սովորույթներ,ընտանեկան բարքեր։ **Կկարողանան** լսել միմյանց,նոթագրել զրուցակցի պատմությունը,իրականացնել հետազոտություն,կազմել ժամանակացույց ,պատասխանատվություն կրել միմյանց նկատմամբ,ցուցաբերել ստեղծագործականություն ու քննադատական մտածողություն։ **Նախագծի պրոդուկտի ստեղծում** . Ուսումնասիրության արդյունքում վկայությունների և փաստերի հիման վրա թիմի անդամներից մեկը՝Գաբրիելյան Ռոզին պատրաստել է տեսադաս, իսկ թիմը ստեղծել է սահիկներ ու տեքստային նյութ՝ պատերազմի յուրաքանչյուր մասնակցի համար ։ Դպրոցի բակում յուրաքանչյուր հերոսի անունով տնկվել են ծառեր և տեղադրվել է խաչքար Ասատրյան Նվերի անունով ։ Անվանակոչվել են դասասենյակներ։ Տեսադասը,սահիկներն ու դրանց համապատասխան շարադրանքը **հավաստի ու պատրաստի աղբյուր** կհանդիսանան հաջորդ տարիների աշակերտության համար, երբ ուսումնասիրելու լինեն Արցախյան և 44-օրյա պատերազմները։ Հրատարակվելու է գրքույկ ։

Ծրագրի իրականացման պլան	<<Կենդանի պատմություն >>նախագիծը իրականացնելու համար սահմանեցինք նպատակ, խնդիրներ ,վերջնարդյունքներ: Կատարեցինք աշխատանքի բաժանում:Թիմի յուրաքանչյուր անդամ գիտեր իր անելիքը՝ դերերը,որոնց համար անհատական պատասխանատվություն էր կրում: Համագործակցության արդյունքում կազմեցինք հարցեր՝ հարցազրույցի համար , պայմանավորվածություն ձեռք բերեցինք զոհվածների ընտանիքների հետ ու անցանք գործի: Սկզբում հանդիպեցիք Ասատրյան Հրանտի ընտանիքի հետ:Պահպանելով էթիկայի տարրական կանոնները և զրուցակցի իրավունքները՝ մենք սկսեցինք ֆոտո ,վիդիո նկարներ և նոթագրում իրականացրել:Յուրաքանչյուր նկարահանումից ու հարցազրույցից հետո հանդիպում էինք ,համեմատում նոթագրումներն ու ձայնագրությունները,ամբողջացնում նյութերը, փատաթղթավորում ու անցնում հաջորդին՝ըստ ժամանակացույցի:Ու այսպես մնացած հինգ զոհվածների կյանքն ու սխրագործությունները գրի առնելով՝ ստեղծեցինք 6 թղթապանակ ,պատրաստեցինք սահիկներ , ակնարկ / սեքստային նյութ /իսկ խմբի անդամներից մեկը նաև տեսադաս :Ծրագրի իրականացման ողջ ընթացքում աշակերտները ցուցաբերեցին զգոնություն,համբերատարություն,համախմբվածություն,միմյանց աջակցելու ու համագործակցելու հմտություն,ոգեշնչեցին ուսուցիչներին ու աշակերտներին,որոնցից շատերը ցանկություն հայտնեցին միանալ մեր ծրագրին:

Շարունակականության ապահովում	**Շարունակականությունը ապահովելու համար** մեր թիմը նախատեսում է տպագրել գրքույկ,երբ ավելի մանրամասն ու բավականաչափ փաստեր և վկայությունները կհավաքվի ոչ միայն զոհվածների ,այլ նաև կենդանի լեգենդների մասին՝ խոսքը թիվ 15 դպրոցի շուրջ երեք տասնյակ հերոսացած հայորդիների մասին է: Դպրոցի տարբեր դասարանների աշակերտներ ոգեշնչվել են ծրագրով,ցանկություն հայտնել մասնակցել նախագծային աշխատանքներին,ովքեր էլ կապահովեն ծրագրի շարունակականությունը
Ծրագրի սահիկաշար *(կցել ակտիվ հղումը)*	https://docs.google.com/presentation/d/1tIbFbX7wMZWmdKxAehCOspOJUt9_JtuR/edit?usp=sharing&ouid=100416843583677210031&rtpof=true&sd=true https://drive.google.com/file/d/1MmDdNNMgJvaec9Bkwi8ka1hhF29TIwqT/view?usp=sharing

***Ծանոթություն**

Ծրագրի սեղմագրի ընդհանուր ծավալը չպետք է գերազանցի 5 էջը:
Ծրագրի սահիկաշարը հղման տեսքով ներկայացնելը պարտադիր պահանջ է:
Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչվելու դեպքում՝ ծրագրի սահիկաշարը ենթակա է հրապարակման: